

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09  
ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

07. 04. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ.Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Վ.Ջաղինյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ս.Գրիգորյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ալյանյանը - մարզպետի խորհրդական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Հ.Անտոնյանը - ԱԻՆ, Լոռու մարզային վարչության պետ
- Ս.Ավուջանյանը - ՓՄՁ ԶԱԿ Լոռու մարզային կենտրոնի տնօրեն

Օրակարգում՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարվեց՝

1. Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Վ.Ասատրյանին, Տ.Բադոյանին, մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս.Խալաթյանին՝

Արտագնա խորհրդակցությունների ժամանակ և զանգվածային լրատվական միջոցներով իրազեկել մարզի ազգաբնակչությանը և համայնքների ղեկավարներին փոքր և միջին ձեռնարկատիրական ԶԱԿ ծրագրերի և գործունեության վերաբերյալ:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ա.Մանուկյանին՝

Կազմակերպել և ապահովել մարզպետարանի աշխատակիցների մասնակցությունը ս/թ ապրիլի 11-ին անցկացվելիք համաքաղաքային շաբաթօրյակին:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին՝

ա/ Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզպետարանի ենթակայության ուսումնական և առողջապահական կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ՝ անհարկի և անհարգելի բացակայությունները բացառելու նպատակով:

բ/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների կողմից շաբաթօրյակի կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

4. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝

Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել Լոռու մարզի համայնքների կողմից հավաքագրվող գումարների գանձման ուղղությամբ:

ԼՈՐՈՒԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան  
Հեռ. 0322/4-32-99/